EmployeeProtect.am առցանց հարթակի օգտագործման պայմաններ

1. Անձնական տեղեկատվություն և օգտագործման պայմանները

Բարի գալուստ EmployeeProtect.am առցանց հարթակ (այսուհետ նաև՝ Հարթակ)։ Հարթակը պատրաստվել է «COVID-19 և կայունություն Հայաստանում. Մեղմացնելով սոցիալ-տնտեսական ազդեցությունը խոցելի մարդկանց և համայնքների վրա, #00122446» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ։ Հարթակի մեթոդաբանության հեղինակային իրավունքը պատկանում է Իրավաբանների հայկական ասոցիացիային։ Հարթակը գործարկում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը։

Խնդրում ենք ընթերցել սույն պայմանները՝ նախքան հարթակի օգտագործելը։

EmployeeProtect.am առցանց հարթակ մուտք գործելով և/կամ օգտագործելով՝ Դուք հավաստիացնում եք, որ ծանոթ եք սույն օգտագործման պայմաններին (այսուհետ՝ Պայմաններ) և համաձայնում եք ղեկավարվել դրանցով։ Սույն պայմանները կարող են պարբերաբար ենթարկվել փոփոխությունների, առանց այդ մասին ծանուցելու, ուստիև, խորհուրդ ենք տալիս յուրաքանչյուր անգամ հարթակ մուտք գործելիս նախապես ստուգել այն։

2. Հեղինակային իրավունք

EmployeeProtect.am առցանց հարթակի բովանդակությունը (տեղեկատվություն, հաղորդագրություններ, լուսանկարներ, պատկերներ, տեսանյութեր) տրամադրվում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից (այսուհետ՝ Տեսչական մարմին)։ Բոլոր իրավունքները պաշտպանված են հեղինակային և հարակից իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ։

EmployeeProtect.am առցանց հարթակը իրավունք է Ձեզ տալիս ուսումնասիրել, պատճենել, ներբեռնել և տպել կայքի բովանդակությունը հետևյալ պայմաններով.

1) Տեղեկատվությունը պետք է օգտագործվի և տարածվի բացառապես անձնական, տեղեկատվական և ոչ առևտրային նպատակներով։

2) EmployeeProtect.am առցանց հարթակի բովանդակությունը մեջբերելիս պարտադիր պետք է պահպանեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի դրույթները:
3) Նյութերը փոփոխելը, ձևափոխելը կամ հարմարեցնելը արգելվում է:

3. Ապրանքային նշան

EmployeeProtect.am առցանց հարթակի անվանումը և ապրանքային նշանը տարբերակում է Տեսչական մարմնի ծառայությունները և հնարավորություն տալիս հասարակությանը ճանաչելու այդ ծառայությունները մատուցողին: Այցելուները իրավունք չունեն օգտագործել EmployeeProtect.am առցանց հարթակի ապրանքային նշանը առանց Տեսչական մարմնի նախնական գրավոր համաձայնության: Բացառություն են կազմում զանգվածային լրատվամիջոցները: Այցելուները իրավունք չունեն օգտագործել EmployeeProtect.am առցանց հարթակի ապրանքային նշանը հետևյալ նպատակներով.

1) EmployeeProtect.am առցանց հարթակի ծառայությունների հետ չկապված ապրանքային նշանի, ֆիրմային անվանման կամ հրապարակման վերնագրի մեջ:
2) Որպես այցելուի ապրանքային նշան կամ ֆիրմային անվանում կամ դրա մասնիկ:
3) Հարթակի հետ կապ չունեցող ծառայությունների նույնականացման համար:
4) Շփոթություն առաջացնելու համար:
5) Նշել որպես այցելուի ծառայությունների հովանավոր կամ այցելուի հետ համագործակցող, եթե առկա չէ Տեսչական մարմնի գրավոր համաձայնությունը:

4. Գաղտնիություն

EmployeeProtect.am առցանց հարթակում հայտ ներկայացնելու նպատակով տրամադրված անձնական տվյալները կօգտագործվեն Գաղտնիության քաղաքականության համաձայն:

5. Պատասխանատվության սահմանափակում

1. Այցելուներն օգտվում են տվյալ կայքից իրենց սեփական ռիսկով: Այս կայքը տրամադրվում է «ինչպես կա» և «ինչպես հասանելի է»՝ առանց ընդունելու որևէ պահանջ և պայմանագրային երաշխիքներ, ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով պահանջներով և պայմանագրային

երաշխիքներով, որոնք կապված են օգտագործման հետ, հասանելիության մատչելիության, ամբողջական արտապատկերության, հավաստիության կամ սույն հարթակի պիտանիության ցանկացած սահմանված նպատակներին: Այցելուները լիովին պատասխանատու են ցանկացած ռիսկերի համար՝ տվյալ ծառայությունների օգտագործման հետ կապված:

2. Տեսչական մարմինը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և ողջամիտ քայլերը, որպեսզի պահպանի սույն հարթակի աշխատանքային վիճակը: Տեսչական մարմինը պատասխանատու չէ սույն հարթակի հնարավոր թերությունների հետևանքների համար: Տեսչական մարմինը ոչ մի երաշխիք չի տալիս, որ սույն կայքը համապատասխան կլինի այցելուների սպասելիքներին, որ այն կաշխատի ժամանակին, անխափան, հուսալի և առանց ընդհատումների, որ ցանկացած ընդհատում և թերություն կշտկվի կամ ցանկացած տվյալ կամ տեղեկատվություն, արձանագրություններ կամ արդյունքներ, որոնք ստացվել են հարթակի օգտագործման արդյունքում կլինեն ճշգրիտ և վստահելի ցանկացած նպատակներով: Այցելուները չպետք է կարծեն, որ սույն հարթակում կամ դրա բովանդակության մեջ չկան սխալներ կամ որ այն համապատասխանում է կոնկրետ նպատակներին, որոնք այցելուները հետապնդում են կայքը օգտագործելիս:

3. Տեսչական մարմինը չի կրում պարտավորություն որևէ վնասի համար, որոնք ծագում են սույն կամ այլ հարթակի ու կայքերի օգտագործման կամ օգտագործման անկարողության արդյունքում, որոնք հասանելի են հղումների կամ ցանկացած այլ գործողությունների միջոցով, որոնք այցելուները կարող են իրականացնել կամ բաց թողնել՝ հիմնվելով տեղեկատվության վրա, որը տեղադրված է սույն հարթակում, այդ թվում, սակայն, չսահմանափակվելով ուղղակի, անուղղակի կամ հետևանքային վնասներով, տվյալների, եկամուտների կամ շահույթի կորստի, սեփականության կորստի կամ վնասի կամ երրորդ անձանց բողոքներով:

4. Տեսչական մարմինը չի կրում այցելուների կամ երրորդ անձանց առջև պարտավորություն ցանկացած փոփոխությունների, սույն հարթակի մուտքի կասեցման կամ դադարեցման, կամ որպես դրա հետևանք տեղեկության կորստի համար:

6. Հղումներ

Հարթակը կարող է պարունակել հղումներ դեպի այլ կայքեր: Տեսչական մարմինը չի տալիս ոչ մի երաշխիք այլ կայքերի վերաբերյալ, ուր այցելուների կարող են մուտք գործել Հարթակի

կայքից: Հարթակի կայքում հղումների առկայությունը դեպի այլ կայքեր չի նշանակում, որ Տեսչական մարմինը պատասխանատու է բովանդակության և օգտագործման համար կամ կարող է կրել որևէ այլ պատասխանատվություն այդ կայքերի հետ կապված:

7. Փոփոխություններ

Տեսչական մարմինը ն իրավունք ունի փոփոխելու սույն Պայմանները և տվյալ հարթակի համար կիրառվող ցանկացած այլ քաղաքականություն: Այդ փոփոխությունները վավեր են դառնում տվյալ հարթակում տեղադրման պահից: Այցելուի կողմից տվյալ հարթակի շահագործումը շարունակելու դեպքում կհամարվի, որ ընդունել եք այդ փոփոխությունները:

8. Տարաձայնությունների կարգավորում (ընդդատություն)

Սույնով այցելուները համաձայնվում են, որ մինչև Տեսչական մարմնի կողմից մատուցվող Ծառայության և նրան գերհղումով (hyperlinked) կամ այլ կերպ փոխկապակցված կայքերի օգտագործման հետ կապված կամ սույն Պայմաններով սահմանված որևէ հարցի կամ դրա հետ կապված որևէ տարաձայնության կապակցությամբ դատարան կամ այլ իրավասու մարմին դիմելը այցելուներն իրենց պահանջը գրավոր կներկայացնեն Տեսչական մարմին կամ Հարթակին: Նման պահանջները քննարկվում են Տեսչական մարմնի կողմից սահմանված ժամկետում:

Տեսչական մարմնի և այցելուների միջև սույն Պայմանների կապակցությամբ ծագած ցանկացած տարաձայնություն ենթակա է վերջնական կարգավորման Հայաստանի Հանրապետության դատարաններում, այդպիսի տարաձայնության ծագման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում համաձայնության չհասնելու դեպքում:

9. Կիրառելի իրավունք

Բոլոր հարցերը և տարաձայնությունները, որոնք ծագում են Հարթակի կամ դրա միջոցով մատուցվող որևէ ծառայության օգտագործման հետ կապված, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության նյութաիրավական նորմերի համաձայն: